

կ'երևնային հետքերը: Բարեպաշտ ժողովուրդին համար որքան որ դժուար երեցաւ այս դէպքը, սակայն ոչ մի բանով իր հրապոյրը չկորսնցուց «Արրահամու վրանը»: Քրիստոնեայք, հեթանոսք և հրեայք իսկ՝ որ չէին ախորժէր ուխտագնացութենէն, բազմամբոխ կուգային տօնելու Աբրահամը, հրեշտակները, Բանն Աստուած՝ որ կը կարծուէր թէ երեցաւ Մամբրէի: Մինչև ե. դար տեղի կ'ունենար այս ուխտագնացութիւնը, ինչպէս Սողոմէն կը տեղեկացնէ: Իւրաքանչիւրը հօն կը գիմէր իր մասնաւոր պաշտամունքովը, միայն թէ հեթանոսական պաշտամունքը հօն նուազած էր փայտակերտ կուռքերու անհետացումովը: Հաւատացեալները բեկկնիի եկեղեցիին մէջ կը պատուէին Աբրահամու երեք հիւրերը ներկայացնող պատկեր մը, և այսպէսով, կ'ըսէ Եւսեբիոս (Գործք Աւետարանականք) առանց գիտնալու կ'իրականացնէին աստուածային պատգամները՝ երկրպագելով Աստուած որդւոյն, որ կը ներկայացուէր յանձին երեք հիւրերուն:

Մամբրէի Աստուածայայտնութեան ի պատիւ կառուցուած եկեղեցին մինչև Յուստինիանոս կանգուն էր՝ դատելով Մատապայի մողայիք քարտէսէն: Եկեղեցիին յարակից սրահազարդ յիշատակարանին մօտ, ան կը ներկայացնէ ծառ մը՝ կարմիր գիրերով, Մամբրէի Կաղնիկ խորագրով. կարմիրը մողայիք շինողներուն համար ընդհանուր գոյնն էր: Գալով քարտէսի շինութեան թուականին գործածուած անուան, սե խորանարդներով գրուած է բեկկնին: Արուեստաւորը ծառը կը նկարէ իր տերեւներով՝ իրերը դնելով այն վիճակին մէջ՝ ինչպէս էր Եւսեբիոսի ժամանակ: Ե՞րբ կործանուած է Կոստանդիանոսի այս եկեղեցին, որոշ չենք